

ԲՈՒՍԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

«Բնության յուրաքանչյուր բույս մի բուժիչ գաղտնիք է, որ
սպասում է իր բացահայտմանը»


Ավիգեննա «Բժշկության կանոն»



A photograph showing a medical professional, a woman in a white lab coat, examining a young child's face. A man stands behind the child, looking on. The scene is set in a clinical or hospital environment.


Բուսական բժշկությունը

Բուսական բժշկությունը
մարդկության
պատմության ամենահին
գաղտնիքներից մեկն է,
որտեղ բնությունը ոչ
միայն սնունդ է
տրամադրում, այլև
բուժում է մարմինն ու
հոգին՝ սկսած հնագույն
ժամանակներից մինչև
ժամանակակից
դեղագիտության հիմքը:



Պատմությունը ցույց է տալիս, որ բույսերի բուժիչ հատկությունները հայտնաբերվել են շատ դարեր առաջ, երբ մարդիկ դեռ սովորում էին բնության հետ հոգեբանորեն և գիտակցականորեն հաղորդակցվել:


ՆԱԽՆԱԴԱՐ



Հազարամյակներ առաջ՝ երբ մարդիկ դեռ քարանձավներում էին ապրում, բուսական բժշկությունը որպես բնության հետ կապված ավանդույթ արդեն գոյություն ուներ, ինչը հաստատում են Իրաքի Շանիդարի մոտ 60 000-ամյա նեանդերտալյան գերեզմանից գտված ծաղկափոշու մնացորդները՝ ցույց տալով, որ երիցուկն ու հազարբիբարը օգտագործվել են ոչ միայն բուժման, այլև ծիսական նպատակներով և կապում էին ֆիզիկականը հոգևորի հետ:

Հին Եգիպտոս

Մ.թ.ա. մոտ 1550 թ.-ին կազմված Եբերսի պապիրուսը պարունակում է մոտ 700 բուժման և մոգական բանաձևեր՝ բազմաթիվ բուսական միջոցներով (օրինակ՝ սիստորն ու կանեփը), որոնք օգտագործվել են վերքեր բուժելու և հիվանդությունն ու չար ոգիները դուրսելու/պաշտպանվելու համար, ու այս պապիրուսի տվյալները ցույց են տալիս՝ եգիպտացիների բժշկությունը խիստ կապված էր կրոնական մաղթանքների, մոգության և նեղոսի բերրիության աստվածաբանական պատկերացումների հետ:



Եբերսի պապիրուս



Արևելքում Չինաստան


մ.թ.ա. 2800 թվականին,
Հուանգդի կայսրը, ինքն իր վրա
փորձարկելով հարյուրավոր
բույսեր, կազմել է «Շեն Նունգ Պեն
Ցաո»-ն, ստեղծելով բուսական
բժշկության առաջին կատալոգը,
որտեղ 365 բույս են
դասակարգվել՝ հիմնվելով դրանց
բուժիչ հատկությունների վրա, ինչը
հիմք է դրել ավանդական չինական
բժշկությանը:



Հնդկաստան




Հնդկաստանում «Այուրվեդա»-ն (մ.թ.ա. 1500–500) ներկայացնում է բուսական բժշկության ամբողջական համակարգ՝ հազարավոր բույսերի (օրինակ՝ հալդի – turmeric) կիրառությամբ մարմնական ու հոգեկան հավասարակշռությունը վերականգնելու նպատակով, և այն մեծ ազդեցություն է ունեցել ամբողջ Արևելքի բժշկության վրա:



Հունաստան



Մ.թ.ա. 460–370 թթ. արևմտյան բժշկության հիմնադիր համարվող Հիպոկրատը իր աշխատություններում համակարգեց և դասակարգեց շուրջ 300–400 բուժիչ բույսեր՝ ցույց տալով դրանց կիրառության բազմազանությունը: Օրինակ՝ արեն օգտագործվել է վերքերի, այրվածքների ու մաշկային խնդիրների բուժման համար, ինչպես նաև որպես լուծողական և մաքրող միջոց մարսողական խանգարումների ու խոցերի դեպքում՝ ունենալով հակաբորբոքային և վերականգնիչ նշանակություն: Հիպոկրատի մոտեցումները, հիմնված «հումորալ տեսության» վրա, դարեր շարունակ ծառայեցին որպես բժշկության զարգացման հիմք և մեծ ազդեցություն ունեցան եվրոպական բժշկական ավանդույթների ձևավորման վրա:



Գալենոսը (մ.թ. 129-200) իր աշխատություններում համակարգեց և դասակարգեց հարյուրավոր դեղաբույսեր ու դեղամիջոցներ՝ ըստ դրանց տաք/ցուրտ և չոր/խոնավ հատկությունների: Նրա «գալենոսյան համակարգը» դարեր շարունակ ընդունվեց Հռոմում, հետագայում փոխանցվեց արաբական բժշկությանը և դարձավ միջնադարյան Եվրոպայի համալսարանների հիմնական ուսումնական աղբյուր: Այս մոտեցումը ձևավորեց եվրոպական բժշկության և դեղագործության ավանդույթները՝ շարունակելով իր ազդեցությունը մինչև 19-րդ դար:

Միջնադար

Միջնադարյան Արաբական աշխարհում Ավիցեննան իր «Կանոն բժշկության» աշխատության մեջ միավորեց հույն, հնդկական և չինական բժշկական գիտելիքները դասակարգելով մոտ 800 բույս, որոնք կիրառվել են վիրահատություններից մինչև հոգեբանական խանգարումների բուժման համար: Այս գիտելիքները եվրոպա տարածվեցին Ռենեսանսի ժամանակաշրջանում (15-17-րդ դարեր), երբ Պարացելսոսը ևս հաստատեց, որ «բոլոր հիվանդությունները հնարավոր է բուժել բույսերով», ամրապնդելով բուսական բժշկության ավանդույթները եվրոպական բժշկության մեջ:



ԱՅՍՊԻՍՈՎ



19-րդ դարում ցորենից ստացված սալիցիլաթթուն վերածվեց աշխարհահռչակ ասպիրինի, իսկ քինինը սկսեց օգտագործվել մալարիայի դեմ պայքարում, ամրապնդելով բուսական բժշկության առանցքային դերը ժամանակակից դեղագիտության հիմքում: Ըստ Առողջապահության համաշխարհային կազմակերպության՝ այսօր աշխարհի բնակչության 80%-ը կիրառում է բուսական դեղեր, և դրանցից մոտ 40%-ը անմիջականորեն բուսական ծագում ունեն՝ օրինակ՝ հանգստացնող վալերիանան կամ հակաբակտերիալ ազդեցություն ունեցող պենիցիլինը (սպորից): Բուսական բժշկությունը ոչ միայն բուժում է մարմինը, այլև սնում հոգին, կապում մարդուն բնության հետ ու հիշեցնում, որ բույսերը մեր ամենահին ու հավատարիմ դաշնակիցներն են:





ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

«Բույսերը մեր առաջին բժիշկներն են, բնությունը՝
ամենամեծ դեղատունը. պահպանելով դրանք՝ մենք
պահում ենք ոչ միայն առողջությունը, այլև մեր կապը
հնագույն իմաստության հետ»:

Աիդա Սարգսյան, ԲԾԻԳ ՊԸ

ՀՂՈՒՄՆԵՐ

- https://newchapter.com/blogs/wellness-blog/the-history-of-herbal-medicine?srsltid=AfmBOoqbslvkmIYwr028QZh0kTr2lc96YQCxU8DvllfgSTYCoBuk_FrS
- <https://www.woodlandherbs.co.uk/blog/herbs/introduction-history/>
- <https://drcolinmacleod.com/herbal-medicine/>
- <https://www.bbc.co.uk/bitesize/guides/zh63vwx/revision/3>
- https://theherbalacademy.com/herbal-history/?srsltid=AfmBOope7yo35-UZjkegWMQfypuYdT_Vp-qj0Wey2Wbn5qy71mKnefao
- <https://www.britannica.com/topic/herbal>
- https://herbmedpharmacol.com/Article/JHP_20150527115854
- <https://www.sciencedirect.com/science/chapter/edited-volume/abs/pii/B9780128155653000011>
- <https://www.ncbi.nlm.nih.gov/books/NBK92773/>